

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

### ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2015թ. նոյեմբերի 27-ի նիստի

Խորհրդի 42 անդամներից ներկա էին 38-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

#### ՕՐԱԿԱՐԳ

1. Իրավագիտության ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվություն:
2. 2014-2015 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսանողական սոցիոլոգիական հարցումների արդյունքների քննարկում:
3. Իրավագիտության ֆակուլտետի հեռակա ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:
4. Ընթացիկ հարցեր:

1. **ԼՍԵՑԻՆ.** Իրավագիտության ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվությունը (զեկ.՝ խորհրդի նախագահ, դեկան, պրոֆ. Գ.Ղազինյան):

Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը սկսեց ներկայացնել 2014-2015 ուսումնական տարվա հաշվետվությունը՝ նախ և առաջ ընդգծելով, որ այն որոշակի առումով տարբերվում է նախորդ տարիների հաշվետվություններից և որ դրա առանցքը 2013 թվականի ապրիլ ամսին հաստատված՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 2014-2019թթ. զարգացման ծրագիրն է և դրանում նախանշված տարբեր ուղղություններով կատարված աշխատանքները: Ապա դեկանը հակիրճ անդրադարձավ հաշվետու ժամանակահատվածում իրավագիտության ֆակուլտետում տեղի ունեցած զարգացումներին և այն խնդիրներին, որոնք առավել կարևոր ու առաջնային են ֆակուլտետի կայուն զարգացման տեսակետից:

Իբրև կարևոր ձեռքբերում՝ դեկանն առանձնացրեց ապագա իրավաբաններին ոչ միայն տեսական, այլ նաև գործնական գիտելիքներ մատուցելու խնդրի նվաճման ուղղությամբ ձեռնարկված քայլերը: Մասնավորապես, դեկանը նշեց, որ մասնագիտական բոլոր առարկաների դասավանդման առումով վերացել է դասախոսություն և սեմինար (գործնական) պարապմունք հստակ տարբերակումը. թե դասախոսությունների և թե

սեմինար (գործնական) պարապմունքների ժամանակ գերակշռում է տեսական նյութի գործնական կիրառման ասպեկտով վերլուծությունը, իրավակիրառ պրակտիկայի նյութերի քննարկումը, գործող օրենսդրության բացերի ու թերությունների վերհանումը և ուսանողների կողմից համապատասխան նորմերի կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակումը, փոփոխվել է նաև բակալավրիատում և հատկապես մագիստրատուրայում դասավանդվող առարկաների ուղղվածությունը (օրինակ՝ մագիստրատուրայի ուսումնական պլանը համալրվել է բացառապես գործնական ուղղվածություն ունեցող առարկաներով): Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը հավելեց, որ քննարկվող խնդրի լուծմանն են ծառայում նաև պարբերաբար կազմակերպվող դասախաղերը՝ ինչպես առանձին դասընթացների ուսումնասիրման շրջանակներում, այնպես էլ ֆակուլտետի ՈԻԳԸ նախաձեռնությամբ՝ հատուկ առանձնացնելով ՈԻԳԸ ջանքերով կազմակերպված ՄԻԵԴ նիստը, որն աննախադեպ էր թե բովանդակությամբ և թե ձևով (ամբողջ նիստն անց է կացվել անգլերեն լեզվով): Դեկանի խոսքերով՝ նույն նպատակին են ծառայում նաև Իրավաբանական կլինիկայի շրջանակներում իրականացվող իրավախորհրդատվությունն ու իրավաբանական ծառայությունների մատուցումը՝ հատուկ նշելով, որ առաջին անգամ կլինիկայի ուսանողների ջանքերով մշակվել է դիմում ՄԻԵԴ, որը գրանցվել է դատարանի գրասենյակում: Իրավաբանական կլինիկան նաև շարունակում է ակտիվորեն մասնակցել «Իրավունք բոլորի համար» ծրագրին, որի շրջանակներում GIZ ընկերության աջակցությամբ տպագրվել է «Իրավունք բոլորի համար» ձեռնարկը:

Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, իբրև ֆակուլտետում վերջին տարիների ընթացքում իրականացվող բարեփոխումների կարևորագույն ուղղություն նշեց, գիտամանկավարժական կադրերի պատրաստումը և վերապատրաստումը, ԵՊՀ ղեկավարության գործունե աջակցությամբ ֆակուլտետի դասախոսական կազմը նոր, երիտասարդ կադրերով համալրումը: Դրական գնահատելով հաշվետու տարում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտական գործունեությունը՝ դեկանը ներկայացրեց անցած ուսումնական տարվա ԳՀԱ ամփոփ ցուցանիշները, հատուկ նշեց նաև ֆակուլտետի ասպիրանտների ու հայցորդների և պրոֆեսորադասախոսական կազմի անդամների ավանդական դարձած տարեկան գիտաժողովների նյութերի ժողովածուները: Դեկանն այս կապակցությամբ հատուկ ընդգծեց, որ բավականին ակտիվացել է դոկտորական ատենախոսությունների պաշտպանությունը՝ արձանագրելով, որ իրավագիտության ֆակուլտետի պատմության ընթացքում վերջինս նման տպավորիչ կազմ թե տարիքի և թե գիտական աստիճանների առումով չի ունեցել (իրավ. գիտ. դոկտորներ՝ 15 և իրավ. գիտ. թեկնածուներ՝ 68):

Հաշվետվության շրջանակներում դեկանն անդրադարձավ նաև վաղուց քննարկվող և շատ առումներով իր վերջնական լուծումը չստացած երկու համակարգային խնդիրների, այն է՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում և հեռակա բաժնում ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպումը: Դեկանը նշեց, որ բոլոր փորձերը առավել նպատակային դարձնել ուսուցումը մագիստրատուրայում հանդիպում են մի շարք խոչընդոտների, որոնցից առավել հիմնականը և կարևորը մագիստրոսական կրթության և, հետևաբար, մագիստրոսի աստիճանի անորոշությունն է կամ անհստակությունը, որի լուծումը առաջին հերթին կապված է այս կրթական ծրագրի առաքելության ու խնդիրների օրենսդրական մակարդակով հստակեցման հետ՝ բակալավրիատի հետ համեմատաբար կրթական արդյունքի որոշակիացման ուղղությամբ: Դեկանը, սակայն, նաև հատուկ ընդգծեց, որ խնդիրը միայն օրենսդրական հստակեցման դաշտում չէ, և որ մագիստրատուրայում ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը խոչընդոտում են որոշ օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներ, մասնավորապես՝ մագիստրատուրայում կրթության կազմակերպման ժամկետների, դրանով պայմանավորված մասնագիտացումների, դասընթացների ու դասավանդման մեթոդների հիմնախնդիրները: Իբրև հնարավոր լուծումը դեկանն առաջարկեց կրճատել մագիստրատուրայում կրթության ժամկետը՝ դարձնելով այն առնվազն մեկ և կես տարի՝ հատուկ նշելով, որ այս դեպքում, իհարկե, խոսք չի գնում ուսման վարձի կրճատման մասին. փոփոխությունները չեն կարող անդրադառնալ ԵՊՀ բյուջեի վրա, այս ժամկետի ընթացքում նույնպես կես տարին տրամադրել ուսումնարտադրական պրակտիկային և դրա նկատմամբ պահանջները խստացնել, վերանայել մագիստրատուրայի կրթական ծրագրի շրջանակներում ավանդական մասնագիտացումները՝ դրանք դարձնելով նպատակային, աշխատանքի շուկայի պահանջերին համապատասխանեցնելով (օրինակ՝ կորպորատիվ իրավաբանի մասնագիտացում, կամ քրեական (քաղաքացիական) գործերով փաստաբանի մասնագիտացում և այլն), համապատասխանաբար բերեփոխել ուսումնական ծրագիրը՝ այն ներդաշնակեցնելով այս կրթական աստիճանի նոր ժամկետներին և նոր մասնագիտացումներին՝ վերացնելով տեսական ուղղվածություն ունեցող և բակալավրիատում դասավանդվող առարկաների նյութի կրկնություն ենթադրող դասընթացները: Դեկանը նշեց, որ նույն կարգի խնդիր է նաև ուսումնական գործընթացի կազմակերպումը հեռակա ուսուցման բաժնում:

Դեկանն իբրև առանձին ու լուրջ քննարկման կարիք ունեցող խնդիր առանձնացրեց ուսումնարտադրական պրակտիկայի կազմակերպման հարցը՝ հույս հայտնելով, որ այս առումով լուրջ տեղաշարժեր կարող են արձանագրվել ֆակուլտետի նոր գիտական խորհրդի կազմում մասնագիտական կառույցների ղեկավարների ընդգրկման և վերջիններիս սպասվող

ակտիվ դերակատարության փաստի ուժով՝ ֆակուլտետի հետ այդ գերատեսչությունների առկա համագործակցությունը առավել խթանելու և համակարգված դարձնելու առումով՝ որպես օրինակ վկայակոչելով նման համագործակցությունը ՀՀ ՄԴ և վճարակ դատարանի հետ: Դեկանը նաև համոզվածություն հայտնեց, որ այս խնդիրների լուծմանն ուղղված արդյունավետ գործունեություն ծավալելու համար «Ճանապարհային քարտեզ» կծառայի ՀՀ-ում 2012 – 2016 թթ. դատաիրավական բարեփոխումների ծրագրի շրջանակներում հաստատված Իրավաբանական կրթության և իրավական դաստիարակության մասին հայեցակարգը, որը մոտ ապագայում իրավական ակտի տեսք կստանա ՀՀ օրենքի կամ ՀՀ կառավարության որոշման տեսքով:

Ավարտելով հաշվետվությունը՝ դեկանը նաև հավելեց, որ սույն թվականի հոկտեմբերի 30 – 31 Մոսկվայում մասնակցել է ՄԱԿ-ի թմրանյութերի և հանցավորության հարցերով վարչության և Միջազգային հարաբերությունների Մոսկվայի պետական ինստիտուտի կողմից կազմակերպված Հակակոռուպցիոն ուսումնական նախաձեռնության սիմպոզիումին, որի արդյունքներով գործընկերների աջակցությամբ կրթության ոլորտում հակակոռուպցիոն ռազմավարության հարցերին նվիրված միջառարկայական դասընթաց մշակելու և ուսումնական պլանն ներմուծելու նախաձեռնությունը հավանության է արժանացել և ընդգրկվել ԵՊՀ զարգացման 2016 – 2020 թթ. ռազմավարական ծրագրում:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Ռեկտոր Ա.Սիմոյանը, դոց. Դ.Ավետիսյանը, պրոֆ. Գ. Հարությունյանը, պրոֆ. Վ.Հովհաննիսյանը, դոց. Ա. Հովհաննիսյանը, :

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվետվությունը գնահատել դրական:

**2. ԼՍԵՑԻՆ. 2014-2015 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսանողական սոցիոլոգիական հարցումների արդյունքների ամփոփում:**

Դեկան, պրոֆ. Գ.Ղազիսյանն ամփոփ ձևով ներկայացրեց 2014-2015 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսանողների սոցիոլոգիական հարցումների արդյունքները: Ամբիոնների վարիչները հավաստիացրին, որ այդ արդյունքները՝ ըստ ամբիոնների, մանրամասն քննարկվել են ամբիոնների նիստերի ժամանակ:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Տ.Բարսեղյանը, պրոֆ. Ն.Այվազյանը, դեկանի տեղակալ, պրոֆ. Հ.Խաչիկյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաղորդումն ընդունել ի գիտություն:

**3. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի հեռակա ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:**

Ամբիոնի վարիչները ներկայացրին ամբիոնների որոշումները՝ հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորման վերաբերյալ՝ միջնորդելով ֆակուլտետի գիտական խորհրդին հաստատել դրանք:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Ս.Դիլբանդյանը, դոց. Ս.Մեղրյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը, պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Վ.Ստեփանյանը:

#### **ՈՐՈՇԵՑԻՆ.**

##### **Ատեստավորել ներքոնշյալ անձանց՝**

##### **Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոն**

##### **Ասպիրանտներ**

- Ամիրյան Կարեն
- Վարդանյան Անի

##### **Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոն**

##### **Ասպիրանտներ**

- Հովհաննիսյան Անժելա
- Բադալյան Անի
- Աղազյուլյան Անի
- Խլղաթյան Անի
- Աթանեսյան Անի

##### **Հայցորդ**

- Անի Ղարիբջանյան

##### **Քաղաքացիական իրավունքի ամբիոն**

##### **Ասպիրանտներ**

- Մարիամ Այվազյան
- Մուրաֆյան Անի
- Սեդրակյան Հայկուհի
- Խչեյան Միքայել
- Սահակյան Նանե
- Չիֆլիկյան Արմենուհի
- Ավետիսյան Աննա
- Հայրապետյան Արուս
- Ավազյան Նարինե
- Ղուկասյան Շուշանիկ

##### **Հայցորդներ**

- Մանուչարյան Նաիրա
- Ասատրյան Տաթևիկ

##### **Քաղաքացիական դատավարության ամբիոն**

##### **Ասպիրանտներ**

- Միքայելյան Անի
- Անտոնյան Անահիտ

- Սահակյան Նարե
- Չիլինգարյան Անի

#### **Հայցորդներ**

- Հովհաննիսյան Հայկ
- Զահրաբյան Լատիրա
- Պետրոսյանց Լատիրա

#### **Սահմանադրական իրավունքի ամբիոն**

##### **Ասպիրանտներ**

- Սարգսյան Հասմիկ
- Սարգսյան Մերի
- Խալաթյան Արտաշես
- Ղազարյան Նանե
- Վարդանյան Սուրեն

##### **Հայցորդ**

- Ավետիսյան Տիգրան

#### **Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոն**

##### **Ասպիրանտներ**

- Աղաբաբյան Նելլի
- Հարությունյան Անահիտ
- Սուջյան Տաթևիկ
- Դանիելյան Անի

##### **Հայցորդ**

- Գևորգյան Գոհար

#### **Քրեական իրավունքի ամբիոն**

##### **Ասպիրանտներ**

- Աբրահամյան Ռոզա
- Հակոբյան Գոհար
- Ստեփանյան Ժենյա
- Միրզոյան Գոռ
- Միմոնյան Գոհար
- Փիրումյան Նինա
- Գալյան Սրբուհի
- Խաչատրյան Քրիստինա

##### **Հայցորդներ**

- Հովհաննիսյան Կարեն
- Իսահակյան Մարինե
- Մովսիսյան Կամո
- Քոթանջյան Գուրգեն
- Ղազարյան Նարեկ
- Ասատրյան Աննա
- Մարության Լիանա

**4.1** **ԼՍԵՑԻՆ.** Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի առկա ասպիրանտ Հայկ Հարությունյանի թեկնածուականատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը:  
**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի առկա ասպիրանտ Հայկ Հարությունյանի՝ «Պետության կառավարման ձևի արդի հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում» վերտառությամբ թեկնածուականատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն ու պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն».

**Բ.** Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Ա.Վաղարշյանին.

**Գ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**4.2** **ԼՍԵՑԻՆ.** Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը Արցախի պետական համալսարանի իրավունքի ամբիոնի հայցորդ Արմինե Դանիելյանի թեկնածուականատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Գ.Դանիելյանը, դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը:  
**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել Արցախի պետական համալսարանի իրավունքի ամբիոնի հայցորդ Արմինե Դանիելյանի՝ «Վարչարարության իրավական հիմքերի բարելավման առանցքային հարցադրումներն Արցախի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուականատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք-սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում».

**Բ.** Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Գ.Դանիելյանին:

**4.3** **ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Ղուլան Ռեզա Շիրազի թեկնածուականատենախոսության թեմայի փոփոխման և նոր գիտական ղեկավարի հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Վ.Ավետիսյանը, դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը:  
**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Փոփոխել Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Ղուլան Ռեզա Շիրազի թեկնածուականատենախոսության թեման և հաստատել այն՝ «Ամուսնության և ամուսնալուծության իրավական կարգավորումը Իրանի Իսլամական Հանրապետության օրենսդրությամբ» վերտառությամբ, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.03- «Մասնավոր իրավունք

(քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)».

**Բ.** Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Վ.Ավետիսյանին.

**Գ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**4.4 ԼՄԵՑԻՆ.** Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Նարե Սահակյանի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ս.Մեղրյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Փոփոխել Քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ Նարե Սահակյանի թեկնածուական ատենախոսության թեման և հաստատել այն՝ «Աշխատանքային հարաբերությունների իրավական կարգավորման խնդիրները գործատուի վերակազմակերպման, լուծարման կամ գործունեության դադարման այլ դեպքերում» վերտառությամբ, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04 - «Դատական իրավունք».

**Բ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**4.5 ԼՄԵՑԻՆ.** Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի միջազգային իրավունքի ամբիոնի ասպիրանտ Նարեկ Աբգարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Վ.Ստեփանյանը, դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի միջազգային իրավունքի ամբիոնի ասպիրանտ Նարեկ Աբգարյանի՝ «Մասնավոր ռազմական ընկերությունների իրավական կարգավիճակը՝ որպես զինված հակամարտության մասնակից» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.06 - «Միջազգային իրավունք»:

*Խորհրդի նախագահ*

*Գ. Ղազինյան*

*Խորհրդի քարտուղար*

*Տ.Սուջյան*



## Քաղվածք

### ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2015թ. նոյեմբերի 27-ի թիվ 3 նիստի արձանագրությունից

**ԼՍԵՑԻՆ.** Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի առկա ասպիրանտ Հայկ Հարությունյանի թեկնածուականատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը:

#### **ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի առկա ասպիրանտ Հայկ Հարությունյանի՝ «Պետության կառավարման ձևի արդի հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում» վերտառությամբ թեկնածուականատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն ու պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն»:

**Բ.** Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Ա.Վաղարշյանին:

**Գ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

*Խորհրդի նախագահ*

*Գ. Ղազինյան*

*Խորհրդի քարտուղար*

*Տ.Սուջյան*

Իրականի հետ ճիշտ է :

*Խորհրդի քարտուղար*

*Տ.Սուջյան*

## Քաղվածք

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի  
2015թ. նոյեմբերի 27-ի թիվ 3 նիստի արձանագրությունից

**ԼՍԵՑԻՆ.** Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը Արցախի պետական համալսարանի իրավունքի ամբիոնի հայցորդ Արմինե Դանիելյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Գ.Դանիելյանը, դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը:

### **ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել Արցախի պետական համալսարանի իրավունքի ամբիոնի հայցորդ Արմինե Դանիելյանի՝ «Վարչարարության իրավական հիմքերի բարելավման առանցքային հարցադրումներն Արցախի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք-սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում»:

**Բ.** Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Գ.Դանիելյանին:

*Խորհրդի նախագահ*

*Գ. Ղազինյան*

*Խորհրդի քարտուղար*

*Տ.Սուջյան*

Իրականի հետ ճիշտ է :

*Խորհրդի քարտուղար*

*Տ.Սուջյան*

## Քաղվածք

### ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2015թ. նոյեմբերի 27-ի թիվ 3 նիստի արձանագրությունից

**ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Ղուլան Ռեզա Շիրազի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման և նոր գիտական ղեկավարի հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Վ.Ավետիսյանը, դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը:

#### **ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Փոփոխել Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Ղուլան Ռեզա Շիրազի թեկնածուական ատենախոսության թեման և հաստատել այն՝ «Ամուսնության և ամուսնալուծության իրավական կարգավորումը Իրանի Իսլամական Հանրապետության օրենսդրությամբ» վերտառությամբ, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.03- «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)».

**Բ.** Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Վ.Ավետիսյանին.

**Գ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

*Խորհրդի նախագահ*

*Գ. Ղազինյան*

*Խորհրդի քարտուղար*

*Տ.Սուջյան*

Իրականի հետ ճիշտ է :

*Խորհրդի քարտուղար*

*Տ.Սուջյան*

## Քաղվածք

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի  
2015թ. նոյեմբերի 27-ի թիվ 3 նիստի արձանագրությունից

**ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Նարե Սահակյանի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ս.Մեղրյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Փոփոխել Քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ Նարե Սահակյանի թեկնածուական ատենախոսության թեման և հաստատել այն՝ «Աշխատանքային հարաբերությունների իրավական կարգավորման խնդիրները գործատուի վերակազմակերպման, լուծարման կամ գործունեության դադարման այլ դեպքերում» վերտառությամբ, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.03- «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)».

**Բ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

*Խորհրդի նախագահ*

*Գ. Ղազինյան*

*Խորհրդի քարտուղար*

*Տ.Սուջյան*

Իրականի հետ ճիշտ է :

*Խորհրդի քարտուղար*

*Տ.Սուջյան*

## Քաղվածք

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի  
2015թ. նոյեմբերի 27-ի թիվ 3 նիստի արձանագրությունից

**ԼՄԵՑԻՆ.** Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը Հայ-  
ռուսական (Սլավոնական) համալսարանի միջազգային իրավունքի ամբիոնի ասպիրանտ  
Նարեկ Աբգարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Վ.Ստեփանյանը, դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը:

### ՈՐՈՇԵՑԻՆ.

**Ա.** Հաստատել Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի միջազգային իրավունքի  
ամբիոնի ասպիրանտ Նարեկ Աբգարյանի՝ «Մասնավոր ռազմական ընկերությունների  
իրավական կարգավիճակը՝ որպես զինված հակամարտության մասնակից» վերտառությամբ  
թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ,  
մասնագիտությունը՝ ԺԲ.00.06 - «Միջազգային իրավունք»:

*Խորհրդի նախագահ*

*Գ. Ղազինյան*

*Խորհրդի քարտուղար*

*Տ.Սուջյան*

Իրականի հետ ճիշտ է :

*Խորհրդի քարտուղար*

*Տ.Սուջյան*